ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 453

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Արծվանիստ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Արծվանիստ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունների կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4. Մարտունի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Արծվանիստ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Արծվանիստ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «25» «նոյեմբերի» 2024 թ.